
ՀԱՅԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՆՈՒՐԻ ՓԱՇԱՅԻ ԿՈՉԵՐԸ
ԵՎ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

1918 թ. հունիսի 4-ին Անդրկովկասի նորանկախ երեք հանրապետությունների (Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի) հետ հաշտության պայմանագրեր կնքելուց հետո Օսմանյան կայսրությունը չդադարեցրեց ռազմական գործողությունները՝ խնդիր դնելով գրավել Բաքուն և կենսունակություն հաղորդել նախկին Ռուսական կայսրության Բաքվի ու Ելիսավետպոլի նահանգների հիմքի վրա նոր պետություն ստեղծել հավակնող իր «կրտսեր եղբայր» Ադրբեջանին: Նշված խնդրի իրականացման ճանապարհին խոչընդոտ էին հատկապես Գանձակի, Ղարաբաղի և Զանգեզուրի հայերը, որոնք չէին ցանկանում հպատակվել նորահռչակ Ադրբեջանական Հանրապետությանը: Հայտնի ջարդարար Էնվեր փաշայի եղբայր, Արևելյան Անդրկովկասում գործող մահմեդական բանակի հրամանատար Նուրի փաշան գործնական քայլերի դիմեց նշյալ տարածքների վրա ադրբեջանական իշխանությունը տարածելու ուղղությամբ՝ ռազմական գործողություններին զուգընթաց նախկին Ելիսավետպոլի նահանգի հայ բնակչությունից պահանջելով ենթարկվել Ադրբեջանին:

Հրապարակվող փաստաթղթերը հայերին ուղղված Նուրի փաշայի երեք կոչերն են և թուրք զորահրամանատարին ուղղված Հայկական առանձին հարվածող զորամասի հրամանատար գեներալ Անդրանիկի գրությունը*: Իրար լրացնելով՝ հրապարակվող փաստաթղթերը պատկերացում են տալիս 1918 թ. ամռանը և աշնանը հայկական Գանձակը, Ղարաբաղն ու Զանգեզուրը մուսավաթական Ադրբեջանին միացնելու ուղղությամբ օսմանյան զորահրամանատար Նուրի փաշայի ձեռնարկած գործողությունների մասին:

ՀԱՍՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

-1-

ԱՂԲԵՋԱՆԻ ՀԱՅԵՐԻՆ

15 (28) օգոստոսի 1918 թ.

* Հայտնի է նաև, որ Շուշի թուրքերի մուտք գործելու նախօրեին Նուրի փաշան մի սպանական կոչ է ուղղել Ղարաբաղի հայերին՝ պահանջելով զինաթափվել, թուրք-ադրբեջանական զորքերին թույլ տալ հաստատվել Շուշիում և ենթարկվել Ադրբեջանին [տե՛ս Հ. Թ ու մ յ ա ն. Դեպքերը Լեռնային Ղարաբաղում 1917-1920 թթ. (պատմական ակնարկ).- Մաշտոցի անվան Մատենադարան, Այլ և այլ հեղինակների արխիվ, ց. 74, թղթ. 240², վավ. 29, թ. 130]:

Իմ ստացած տեղեկությունների համաձայն վերջին շրջանում Շուշիի և Զանգեզուրի գավառների հայերը, գաղտնի և բացահայտ հարաբերությունների մեջ գտնվելով Գանձակի գավառի լեռնային մասի հայերի հետ և ենթարկվելով թուրքական զորամասերից ամենուրեք պարտված և հալածված Անդրանիկի սաղրանքներին, որը երևացել է Ադրբեջանի տարածքում¹, հարձակվում են մահմեդական գյուղերի վրա և կատարում մասսայական սպանություններ ու կողոպուտներ:

Այս պատճառով էլ ես իմ պարտքն եմ համարում դիմելու Ձեզ հետևյալ հայտարարությամբ.

Բոլորին հայտնի է, որ մինչև հայերի մեջ քաղաքական տարբեր կազմակերպությունների ստեղծումը և մինչև նրանց մեջ Օսմանյան կայսրությանը թշնամի պետությունների կողմից քաղաքական բանասարկությունների տարածումը, հայերի և թուրքերի միջև չի եղել ոչ մի թյուրիմացություն, և այդ երկու ազգերը, իրար նկատմամբ մյուս ազգերից ավելի փոխադարձ վստահություն ունենալով, եղել են իրար մոտիկ և բարեկամաբար վերաբերվել միմյանց նկատմամբ: Օսմանյան կայսրության ստեղծումից սկսած օսմանյան քաղաքականությունն ուղղված է եղել պաշտպանելու իր տարածքի ժողովուրդների տնտեսական, կրոնական և մյուս իրավունքները: Այդ քաղաքականությունն անշեղորեն վարում է և ներկա կառավարությունը²: Դրա փայլուն ապացույցն այն է, որ Թուրքիայի ներքին և արտաքին կառավարական հաստատություններում մինչև այժմ թուրքահայերը զբաղեցրել են ամենապատասխանատու պաշտոնները և որ հայ բնակչությունը տնտեսապես ամենից ապահովվածն է: Թուրքիայում բնակվող ժողովուրդներից ոչ մեկն այնքան հարուստ և երջանիկ չէ, որքան քաղաքականությամբ չվարակված հայերը:

Ֆրանսիան, Ամերիկան, առանձնապես Անգլիան և հին Ռուսաստանը, իրենց քաղաքական շահի համար ձեզ որպես բույժ գործիք ընտրելով, կաշառել են ձեր աչքի ընկնող գործիչներին և ձեր մեջ ստեղծել զանազան քաղաքական կազմակերպություններ: Նրանց դրդմամբ Կոստանդնուպոլսում (թուրքական բանկում), Անատոլիայում, Սասունում հայերը հավաքել են մեծ քանակությամբ զենքեր ու պայթուցիկ նյութեր, որոնց բացահայտումով բռնկվել է թշնամության հրդեհը հայերի և թուրքերի միջև, որոնք դարերով վստահությամբ ու բարեկամաբար ապրել են կողք կողքի՝ ինչպես միասնական հայրենիքի անբաժան գավակներ: Հզոր և կազմակերպված Թուրքիան հայերի այդ բոլոր արարքների նկատմամբ տոկուն և բարյացակամ վերաբերմունք է ցուցաբերել՝ ամենուրեք վստահություն ցույց տալով հպատակ հայերի նկատմամբ և, ինչպես վերևում ասվեց, նրանց տալով ամենից պատասխանատու պաշտոնները: Բայց նրանք՝ հայերը, փոխանակ լինելու իրենց հայրենիքի բարեկամի բարեկամը և թշնամու թշնամին, պատերազմի ընթացքում նետվելով մեր վաղեմի թշնամիների՝ Անգլիայի, և

¹ Նուրի փաշան նկատի ունի Զանգեզուրում Անդրանիկի գտնվելու իրողությունը, որը նա Ադրբեջանին պատկանող տարածք է հայտարարում:

² Խոսքը Հայոց ցեղասպանության գլխավոր կազմակերպիչներից մեկի՝ Թալեաթ փաշայի գլխավորած կառավարության մասին է:

միշտ հենց իրենց՝ հայերին հալածող Յարական Ռուսաստանի գիրկը, Թուրքիայի սահմաններում ապստամբություն բարձրացրեցին և սկսեցին հարձակվել իրենց հայրենակիցների վրա՝ մոռանալով, որ Օսմանյան կայսրությունը մի քանի դարերի ընթացքում հարգել է նրանց կրոնը, ազգությունը, լեզուն, գրականությունը, բարքերն ու սովորույթները:

Եղածն անցել է: Իմ Փառիշահի³ բարձրագույն հրամանով և վայելելով իմ կառավարության վստահությունը՝ ես, առաջին անգամ մտնելով Կովկասի սահմանները, ամբողջ անցյալը հանձնում եմ Ալլահի դատաստանին, բայց միաժամանակ հայտարարում եմ, որ իմ այստեղ ժամանելուց հետո տեղի ունեցող բոլոր դեպքերի նկատմամբ պիտի դարձնեմ իմ առանձնահատուկ ուշադրությունը:

Ինձ հայտնի են Ղարաբաղում և նրա շրջակայքում, Ջանգեզուրի գավառում և Գանձակի գավառի լեռնային մասում ձեր պատրաստությունները: Ես ձեր սրտերում տեսնում եմ նաև թշնամության այն կրակը, որ պատրաստ է բռնկվելու բոլոր առ բոլոր: Պետության մեջ խաղաղություն հաստատելու մտադրությամբ ազգամիջյան երկպառակությանը մասնակից անձանց անկեղծորեն խորհուրդ եմ տալիս մարելու այդ թշնամության հրդեհը: Բավական է [թափված] արյունը: Հաստատապես իմացեք, որ ձեր հետագա ապստամբությունները և մնացյալը կհամարվեն ուղղված օսմանյան բանակի դեմ: Խնայեք անմեղ երեխաների կյանքը, մի հրապուրվեք ողջ մարդկությանն իր նվաճողական ցանկություններին զոհ բերող նենգ Անգլիայի ոսկով ու բանասարկություններով և գործիք մի դարձեք հափշտակողների ձեռքին:

1905 – 1906 թթ. եղբայրասպան երկպառակության կրակը բռնկվել է այժմ փլուզված Յարական Ռուսաստանի կողմից, որը, երկդիմի քաղաքականություն վարելով հայերի և մահմեդականների միջև, հավասարապես զենք և փամփուշտներ է մատակարարել երկու թշնամացած կողմերին: Ներկայումս ձեր նկատմամբ նույն արյունոտ դերն է խաղում Անգլիան: Նա, իբրև թե թուրքական գորքերին [Կովկասից] վտարելու նպատակով, ձգտում է ձեր մեջ նորից բորբոքել անմիաբանության կրակը և Կովկասը վերածել սպանդանոցի՝ այն ջերմացնելով հայ – մուսուլմանական արյունով:

Ղարաբաղը կազմում է Ադրբեջանական Հանրապետության անբաժանելի մասը: Անդրանիկն ու իր նմանները, հարբած մարդկային արյունով և անգլիական ոսկով, այստեղ ապօրինի կազմված կառավարությունը⁴ ոչ այլ ինչ են, քան ամենասովորական ավազակներ: Օսմանյան կայսրությունը, բացի հարավային Անդրկովկասում պաշտոնապես կազմավորված Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի հանրապետություններից, չի ճանաչում ոչ մի այլ կառավարությունների և կազմակերպությունների: Օսմանյան կայսրության քաղաքական շահերը թույլ են տալիս միայն այս երեք պետությունների գոյության հնարավորությունը, որոնց իրավունքներն էլ կհարգվեն նրա կողմից:

³ Սուլթանի:

⁴ Ամենայն հավանականությամբ, խոսքը 1918 թ. հուլիսի 22-ին (օգոստոսի 4) գումարված արցախահայության առաջին համագումարի որոշմամբ Եղիշե Բշխանյանի գլխավորությամբ ստեղծված Ղարաբաղի ժողովրդական կառավարության մասին է:

Հուսով եմ, որ Ադրբեջանական Հանրապետության ուղղամիտ, խաղաղության ու ազատության ծարավ հայերը չեն ներքաշվի անգլիական խարդավանքների մեջ և անառարկելիորեն կկատարեն տեղերում գտնվող թուրքական կոմենդանտների ու տեղական իշխանությունների հրամաններն ու կարգադրությունները՝ անպատասխանատու խուլիգաններին հորդորելով և ուղղելով հնազանդության ու կարգ ու կանոնի:

Եթե լեռներում անմիջապես չդադարի զինված մարդկանց անցուղարձը, հարձակումները մահմեդական գյուղերի վրա, սպանությունները, թալանը և բնակավայրերի միջև հաղորդակցության ուղիների փակումը, ապա թվարկված արարքների անցանկալի հետևանքների պատասխանատվությունը կընկնի հայ բնակչության ներկայացուցիչների խղճի վրա:

Նուրի փաշա

ՀԱԱ, ֆ. 252, ց. 2, գ. 1, թ. 11, գ. 23, թ. 1: Բնագիր: Տպագիր օրինակ: Թարգմանություն ռուսերենից⁵:

–2–

<ԳԱՆՁԱԿԻ ՀԱՅԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՆՈՒՐԻ ՓԱՇԱՅԻ ԿՈՉԸ⁶>

[1918 թ. սեպտեմբերի առաջին կես]

Հայե՛ր, ... ես ձեզ նախազուշացնում եմ՝ հանգիստ մնացե՛ք: Դուք էլ, ինչպես և թուրքերը⁷, միևնույն պետության հպատակներն եք, և ես միատեսակ եմ վերաբերվում ձեզ, ինչպես և ուրիշներին, բայց ձեր արկածախնդիր Անդրանիկը, անգլիացիների դրոշմամբ, երևացել է Ղարաբաղում⁸ և ձեզ ապստամբության է հրավիրում: Նախազուշացնում եմ, որ դուք հանգիստ նստեք և չմիանաք Անդրանիկին. հակառակ դեպքում ես ինձ զերծ եմ համարում ամեն պատասխանատվությունից և հայտնում եմ, որ այստեղ էլ կկրկնվի Ադանայի կոտորածը:

Նուրի փաշա

⁵ Փաստաթղթի օսմաներեն բնագիրը տե՛ս ՀԱԱ, ֆ. 252, ց. 2, գ. 1, թ. 12, ռուսերեն բնագրի ֆոտոպատճենը՝ ՀԱԱ, ֆ. 370, ց. 3, գ. 64, թ. 1, իսկ համառոտ և ընդարձակ թարգմանությունները՝ «Աշխատավոր» (18. 09. 1918 թ.), «Հորիզոն» (18. 09. 1918 թ.) ու «Մշակ» (20. 09. 1918 թ., 18. 02. 1919 թ.) թերթերում:

⁶ Փաստաթուղթը տպագրվել է թուրքերեն և 1918 թ. սեպտեմբերի առաջին օրերին փակցվել Գանձակ քաղաքի շենքերի պատերին:

⁷ Այսինքն՝ ադրբեջանցիները:

⁸ Նուրի փաշայի կողմից կամայականորեն կատարված Ադրբեջանի «վարչական բաժանմամբ» Ղարաբաղի ռազմական պարետության մեջ էր մտնում նաև Ջանգեզուրը (տե՛ս Ա. Հ ա բ ո լ թ յ ու ն յ ա ն. Թուրքական ինտերվենցիան Անդրկովկասում 1918 թ. և ինքնապաշտպանական կռիվները, Երևան, 1984, էջ 237):

«Ժողովրդի ձայն», 15. 09. 1918 թ.:

–3–

ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԳԱՎԱՌԻ ՀԱՄԱՅՆ ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ⁹

[8 – 10 հոկտեմբերի 1918 թ.]

Ամբողջ տիեզերքում բարեկեցության անհրաժեշտ պայմաններն են ընդհանուրի խաղաղությունը և կյանքի անդորրությունը, որոնք առավել ևս կարևոր են այն դրացի ժողովուրդների համար, որոնք դարերի ընթացքում ապրում են կողք կողքի և բաժանում իրար տրտմությունն ու ուրախությունը:

Վերջին ժամանակներում Գանձակի և նրան սահմանակից նահանգներում անդադար նկատվում են ավարառություն, խռովություն, թշնամություն, սպանություն թե՛ տղամարդու, թե՛ կնոջ, թե՛ հարուստի, թե՛ աղքատի, թե՛ քաղաքացու, թե՛ գյուղացու. կարծես թե բոլոր հայ և թուրք¹⁰ անպատասխանատու տարրերը թալանի տենչով տարված աշխատում էին գերագանգել մեկը մյուսին և անիշխանության գիրկն ընկած ոտնակոխի էին անում ամեն մի սրբություն, քանդում իրար տուն ու տեղ և դժոխային կյանք ստեղծում իրենց շուրջը:

Ես օսմանյան պետության անունից բոլոր հայերից և թուրքերից պահանջում եմ՝ անվրդով խաղաղություն, կատարյալ հանգստություն, շինարարական և հասարակական ստեղծագործական կյանք ու բարիդրացիական փոխհարաբերություն երկու ազգերի միջև:

Վստահ եմ, որ Զանգեզուրի թուրք և հայ ազգաբնակչությունը, համակրելով իմ մտքերին և զգացմունքներին, որոնք մաքուր սրտից բխած արտահայտություններ են, իրենցից կթողափեն առօրյա դառը լուծը, կթողնեն վերջին շրջանում կատարած քստմնելի և անպատվաբեր, կամ ավելին ասած, կորստաբեր արարքներն ու քայլերը և, ձեռք ձեռքի տված, անկեղծորեն կաշխատեն լարված ուժերով վերականգնել գավառի հանգստությունը և դրա հետ սերտ[որեն] կապված իրենց բարեկեցությունը:

Մարդասիրական բուռն զգացմունքով լցված հայտարարում եմ բոլոր զանգեզուրցիներին առանց ազգության և դավանանքի խտրության. «Ի մի համակվեցեք, այսուհետև հոգացեք ձեր հայրենիքի բարօրության և բարգավաճման մա-

⁹ Մեր ձեռքին են փաստաթղթի հայերեն և ռուսերեն բնագրերը, որոնց միջև առկա են իմաստային աննշան տարբերություններ: Կոչի ռուսերեն տարբերակում նշվում է, որ այն տպագրվել է Շուշիում՝ Բ. Տեր – Սահակյանցի տպարանում, այսինքն՝ 1918 թ. սեպտեմբերի 25-ին (հոկտեմբերի 8) Շուշի թուրքերի մուտք գործելուց հետո: Փաստաթղթի վերջում դրված է Օսմանյան առաջին կովկասյան դիվիզիայի հրամանատարության կնիքը: Փաստաթղթի բովանդակությունից դատելով՝ ամենայն հավանականությամբ այն Շուշին գրավելուց հետո Նուրիի անունից զանգեզուրցիներին ուղղված կոչն է: Հայտնի է, որ այն Գորիս է հասել 1918 թ. հոկտեմբերի 11-ին (տե՛ս Հայկական առանձին հարվածող զորամասը: Ժեներալ Անդրանիկ, Պոսթոն, 1921, էջ 117 – 119): Փաստորեն, փաստաթուղթը պատրաստվել է 1918 թ. հոկտեմբերի 8–10-ն ընկած ժամանակահատվածում:

¹⁰ Փաստաթղթում «թուրք» անվան տակ հասկացվում է ադրբեջանցի:

սին և հնազանդվե՛ք այն իշխանությանը, որի գործադիր մարմնի անդամներին, խորհրդակցելով Շուշի քաղաքում կազմակերպված հանձնաժողովի հետ, ես ուղարկում եմ ձեզ մոտ»¹¹:

Վարչության անդամները կլինեն անկաշառ, աչալուրջ և արդարացի իրենց պարտականությունների մեջ, և նրանց օրինական բոլոր կարգադրություններին պետք է հնազանդվել ինչպես վայել է ամեն մի հայրենասեր քաղաքացու. հակառակ դեպքում հանցավորները կենթարկվեն ամենախիստ պատասխանատվության ու պատժի:

[Նուրի փաշա]

ՀԱԱ, ֆ. 252, ց. 2, գ. 1, թ. 17, գ. 24, թ. 1, ֆ. 370, ց. 1, գ. 33, թ. 45: Բնագիր: Տպագիր օրինակ¹²:

–4–

< ԱՆԴՐԱՆԻԿԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ ՆՈՒՐԻ ՓԱՇԱՅԻՆ¹³ >

30 սեպտեմբերի (13 հոկտեմբերի) 1334 (1918) թ.

Կարդացի [1918 թ.] օգոստոսի 15-ի Ձեր հայտարարությունը, տեղեկացա նաև իմ մասին Ձեր գրած զրպարտություններին: Բնչպես Դուք եք գրում, ես ձեզնից հաղթված և հալածված¹⁴ չեմ: Ընդհակառակը, այսօր Դուք իմ առջև բարոյապես հաղթված եք, քանի որ, հավանաբար, հիշում եք Սասունում, Մուշի [Առաքելոց] վանքում, Մուշի Գոմեր գյուղում տեղի ունեցած կռիվներում քառասուն ֆիդայիների դիմացից հազարավոր ասկյարների փախուստը, նաև Բալկանյան պատերազմը, Բիթլիսի գրավումը և վերջին օրերին Խոյի մոտ ձեր լքած թնդանոթներն ու գնդացիները: Եթե չեք հիշում, կարող եք հարցնել այդ ամենին տեղյակ Յավեր փաշային¹⁵:

Ասում եք, թե կաշառված եմ անգլիական կառավարության ոսկիներով: Աշխարհում կաշառակերությամբ խայտառակված մի պետություն եթե կա, այդ ձեր երկիրն ու կառավարությունն է, ձեր պաշտոնյաները: Դուք ձեզ անպարտ եք հա-

¹¹ Խոսքը Շուշի թուրքերի մուտք գործելուց հետո կազմված հայ – մահմեդական խառը հանձնաժողովի համաձայնությամբ տեղական գործիչներից Միքայել Պարոնյանին Ձանգեզուրի գավառապետ, իսկ Նիկոլայ Հովսեփյանին և Միքայել Սաֆրասբեկյանին՝ գավառակապետեր նշանակելու մասին է (տե՛ս Հայկական առանձին հարվածող զորամասը: Ժեներալ Անդրանիկ, էջ 119): Սակայն նշված գործիչները չընդունեցին թուրքերի կողմից իրենց արված «շնորհը»:

¹² Փաստաթղթի բուսերեն բնագիրը տե՛ս ՀԱԱ, ֆ. 252, ց. 2, գ. 1, թ. 15, ֆ. 370, ց. 1, գ. 33, թ. 44:

¹³ Փաստաթուղթն օսմաներեն բնագրից թարգմանել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի աշխատակից Կարոլինա Շիրոյանը:

¹⁴ Բնագրում բառացի նշված է՝ «ձեր հետևից փախչող»:

¹⁵ Յավեր փաշան Բալկանյան պատերազմի ժամանակ գերվել էր Անդրանիկի կողմից (տե՛ս Ն. Կ ա ր ա պ ե տ յ ա ն. Անդրանիկ, պ. 3, Երևան, 1994, էջ 577): Վերջինս նույն հեռանկարով էր սպառնում Նուրիին:

մարում, սակայն համաշխարհային պատմությունը ցույց է տալիս, որ դուք հերոս եք միայն անմեղ ու անզեն ժողովրդի հանդեպ: Այս կետը ես հրաշալի գիտեմ:

Ձեր կառավարության արյունահեղությանը հակված լինելը, խաբեքա քաղաքականություն իրականացնելն աշխարհին հայտնի լինելուց հետո ինքներդ ձեզ հզոր պետության պաշտոնյա եք համարում, և, հայտարարություններ հրապարակելով, ցանկանում եք անմեղ ժողովրդին ձեր լարած թակարդը զցել: Այո՛, հնարավոր է, որ դուք այս ոլորտում կարող եք հաջողել և բազմաթիվ անմեղ [մարդկանց] արյան պատճառ լինել, սակայն վստահ եղեք, որ մեզ չեք կարող խաբել: Աստծո կամքով շատ մոտ ժամանակ կհանդիպենք միմյանց:

Անդրանիկ

ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 7, թ. 3 և հակ.: Բնագիր: Ձեռագիր: Թարգմանություն օսմաներենից¹⁶:

¹⁶ Հայերեն արխիվային ոչ հաջող թարգմանության հիման վրա փաստաթուղթը հրապարակվել է *ռուսերեն (տե՛ս А н д р а н и к О з а н я н. Документы и материалы.– “Вестник архивов Армении”, 1991, № 1 – 2, с. 312 – 313).*